



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

«25» \_\_\_\_\_ 09 2007 թ.

N 125-Ա/11

**«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ N 2 գիշերօթիկ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԴՐԱ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 890-Ն որոշման 4-րդ կետի 2) և 3) ենթակետերը,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի դ) ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել՝

- 1) «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.
- 2) «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.
- 3) «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետում նշված պետական կազմակերպության տնօրենին՝ սահմանված կարգով ապահովել կանոնադրությունն իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մ. ԱՐԳՈՒՆՅԱՆ



Հանրապետության  
արհեստագործական  
կազմակերպության  
07 թվականի  
հունիս

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ  
ԵՐԵՎՈՒՆՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՅ 05.05.2003 թ.  
գրանցման թիվ 278.210.03431  
վկայական թիվ 03 Ա 060424  
Թիվ 01-2 փոփոխությունը  
գրանցված է իրավաբանական  
անձանց պետական ռեգիստրի  
Էրեբունու տարածքային բաժնի  
կողմից

«03» 07 թվականի  
Էրեբունու քաղաքում



**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ N 2 ԳԻՇԵՐՈԹԻԿ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ պետական կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սոցիալական բնագավառում գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Պետական կազմակերպությունը հանդիսանում է «Երևանի մտավոր թերգարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (գրանցման համարը 278.210.03431, վկայականի համարը 03 Ա. 060424, գրանցման ամսաթիվը 05.05.2003թ.) իրավահաջորդը:
3. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
4. Պետական կազմակերպության գոնկելու վայրն է՝ քաղաք Երևան, Նուբարյաշեն, Չնքուշի 14:
5. Պետական կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և

օտարերկրյա պետությունների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող միջոցներից:

6. Պետական կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
7. Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
8. Պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
9. Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած պետական կազմակերպության պարտավորությունների, իսկ պետական կազմակերպությունը՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:
10. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ինչպես նաև կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
11. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
12. Պետական կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը:
13. Պետական կազմակերպության անվանումն է

հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,  
հայերեն կրճատ՝ ՀՀԱՍՀՆԵԵԽՊԳՀՊՈԱԿ N2  
ռուսերեն՝ Ереванский интернат N2 по уходу и защите детей Министерства труда и социальных  
вопросов Республики Армения, государственная не коммерческая организация  
ռուսերեն՝ կրճատ՝ ЕИПУЗДМТИСВГНКО N2  
անգլերեն՝ Yerevan Children Care and Protection Boarding Institution N 2 State Non Commercial  
Organization of Ministry of Labour and Social Issues of the Republic of Armenia  
անգլերեն կրճատ՝ YCHCPBISNCOMLSIRA N2

## II. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

14. Պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, աղքատ (սոցիալապես անապահով) ընտանիքի՝ 6-18 տարեկան երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, սննդով, նրանց՝ հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումն է:

15. Պետական կազմակերպությունը պատասխանատու է պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխան երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման, կյանքի անվտանգության և առողջության, ինչպես նաև սանիտարական նորմերի ու կանոնների պահպանման համար:
16. Պետական կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) երեխաների՝ մատուցվող ծառայությունների, շենքի պայմանների, հատուկ դեպքերում տարահանման հնարավորությունների, պետական կազմակերպությանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին կարևոր տեղեկատվությամբ ապահովում՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները.

- 2) երեխայի անվտանգության և պաշտպանության ապահովում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - 3) պետական կազմակերպությունում երեխայի ինտեգրման ապահովում՝ հաշվի առնելով նրա՝ նոր սոցիալական միջավայրին հարմարվելու անհատական առանձնահատկությունները.
  - 4) պետական կազմակերպությունում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում երեխայի խնամքի կազմակերպում՝ ապահովելով խնամքի շարունակականության սկզբունքը, ստեղծելով ընտանեկանին հնարավորինս մոտ պայմաններ և առաջնորդվելով անհատական մոտեցմամբ.
  - 5) երեխային առողջ, անհրաժեշտ քանակությամբ և տարիքին համապատասխան սննդով ապահովելը.
  - 6) երեխային հագուստով և անձնական օգտագործման պարագաներով ապահովելը՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից.
  - 7) երեխային կյանքի համար անվտանգ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ ապահովելը՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը և առողջական վիճակը.
  - 8) երեխայի առողջ ապրելակերպի (սնունդ, ֆիզկուլտուրա և սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմանների ապահովում.
  - 9) երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովում՝ հաշվի առնելով նրա հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, անձի նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակություններն ու պահանջումները.
  - 10) որպես կանոն, համայնքի հանրակրթական դպրոցներում երեխայի հանրակրթության ապահովում.
  - 11) ընտանիքի և հարազատների հետ երեխայի կապի ապահովում.
  - 12) 14-18 տարեկան երեխաների մասնագիտական կողմնորոշման, նրանց աշխատանքի տեղավորման աջակցության ապահովում՝ համագործակցելով զբաղվածության տարածքային մարմինների և գործատուների հետ,
  - 13) երեխաների հետ անմիջական աշխատողների պարբերական մասնագիտական վերապատրաստման և բժշկական ստուգման ապահովում.
  - 14) երեխայի խնամքի և պաշտպանության հետ կապված այլ գործառույթների իրականացում:
17. Պետական կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը՝ երեխաների խնամքի ու դաստիարակության վճարովի ծառայությունների մատուցում:

### III. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
19. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) պետական կազմակերպության կանոնադրությանը համապատասխան՝ իր

հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

20. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
21. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:
22. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

#### IV. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

23. Հիմնադրի որոշմամբ պետական կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:
24. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:
25. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Պետական կազմակերպությանն ամրացված պետական գույքը վարձակալության հանձնելիս ստացված վարձավճարներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

#### V. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

26. Պետական կազմակերպությունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:
27. Պետական կազմակերպությունը գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:
28. Պետական կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

#### VI. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:
30. Պետական կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:
31. Պետական կազմակերպության հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
32. Պետական կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- 1) պետական կազմակերպության հիմնադրումը,
  - 2) պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
  - 3) պետական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
  - 4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
33. Լիազորված պետական մարմինն իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա քնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
34. Լիազորված պետական մարմինը՝
- 1) հաստատում է պետական կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները.
  - 2) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.
  - 3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
  - 4) լսում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.
  - 5) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ.
  - 6) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս պետական կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
  - 7) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
  - 8) հաստատում է պետական կազմակերպության եկամուտների և տարեկան ծախսերի նախահաշիվը.
  - 9) տնօրենի ներկայացմամբ՝ հաստատում է պետական կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը.
  - 10) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
35. Պետական կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
36. Տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
37. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
38. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետական կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:
39. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները,

կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

40. Տնօրենի բացակայության դեպքում՝ լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:
41. Տնօրենը՝
  - 1) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.
  - 2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
  - 3) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
  - 4) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
  - 5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
  - 6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.
  - 7) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում պետական կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը.
  - 8) օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
  - 9) հաստատում է սոցիալ-մանկավարժական խորհրդի կազմը.
  - 10) սահմանված կարգով՝ լիազորված պետական մարմին է ներկայացնում պետական կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը.
  - 11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:
42. Երեխաների խնամքի, ուսուցման, բժշկասոցիալական, սոցիալ-հոգեբանական վերականգնման, դաստիարակչական հարցերը քննարկելու և լուծելու նպատակով պետական կազմակերպությունում ստեղծվում է սոցիալ-մանկավարժական խորհուրդ՝ խորհրդակցական մարմնի կարգավիճակով (այսուհետ՝ խորհուրդ):
43. Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենը, մանկավարժը, բժիշկը, այն դպրոցի (դպրոցների) տնօրենը, որտեղ սովորում են պետական կազմակերպության սաները և այլ մասնագետներ, լիազորված պետական մարմնի ներկայացուցիչը:
44. Խորհուրդը կազմված է 7 անդամից:
45. Խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի անդամներից:
46. Խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:
47. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.
  - 1) պետական կազմակերպության աշխատանքային պլանի, բուժայրոֆիլակտիկ ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերի քննարկում և լիազորված պետական մարմին դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.
  - 2) սաների հանրակրթության կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում.
  - 3) դաստիարակչական խմբերի աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկում.
  - 4) դաստիարակների, բժշկական անձնակազմի և այլ աշխատողների աշխատանքային գործունեության քննարկում.

- 5) երեխաների խնամքի և սպասարկման նոր ձևերի ներդրման նպատակահարմարության քննարկում.
- 6) երեխաների մասնագիտական կողմնորոշման, նրանց հետագա ուսման կազմակերպման հարցերի քննարկում.
- 7) երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված այլ հարցերի քննարկում:

48. Պետական կազմակերպության աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան. սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

## **VII. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ**

49. Պետական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

50. Պետական կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

## **VIII. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒԹՅԱՆ**

51. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

52. Պետական կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

53. Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

54. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

55. Պետական կազմակերպությունը կարող է դատական կարգով լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

56. Պետական կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:



ԿԱԶՄ

«Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-  
ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող պետությանը  
պատկանող գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Գումարը (հազ. դրամ)	
				Սկզբնական արժեքով	Մնացորդային հաշվեկշռային արժեքով
1	2	3	4	5.0	6.0
<b>I</b>	<b>Շենքեր</b>				
1	Վարչական մասնաշենք	քմ	1154.6	9327.0	6487.0
2	Ննջարանային մասնաշենք	քմ	1776.3	18427.1	13423.1
3	Պահակատուն	քմ	11.1	38.1	26.6
4	Կաթսայատուն - լվացքատուն	քմ	355.7	1924.1	1338.4
5	Մեկուսարան	քմ	169	1813.1	1261.2
6	Պահեստարան	քմ	500.6	0.0	0.0
7	Գրքի գուգարան	քմ	22	0.0	0.0
	<b>Ընդամենը</b>	քմ	<b>3989.3</b>	<b>31529.4</b>	<b>22536.3</b>
<b>II</b>	<b>Շինություններ</b>				
1	Ցանկապատ բեռոց	գծա.մ	345	100.6	80.8
2	Ներքին ջեռուցման և արտաքին կոյուղու ցանց	գծա.մ	65	16.1	0.0
3	Լողավազան	քմ	184.1	0.0	0.0
4	Զբոսարաններ / բեսեռկա/ 4 հատը 9-ական քառ. մ-ով, մեկ հատը՝ 6 քառ.մ-ով	քմ	42	0.0	0.0
5	Երեխաների սղարան և ճոճանակ	հատ	1	0.0	0.0
6	Սպորտ. հրապարակ	քմ	476	0.0	0.0
7	Մանկական կառուսել	հատ	1	0.0	0.0
	<b>Ընդամենը</b>	x	<b>1114.1</b>	<b>116.7</b>	<b>80.8</b>
<b>III</b>	<b>Բազմամյա տնկարքեր</b>	հատ	<b>109</b>	<b>23.8</b>	<b>23.8</b>
<b>IV</b>	<b>Սարքեր և սարքավորումներ</b>				
1	Գրամեքենա «Ուկրաինա»	հատ	1	9.6	0.0
2	Գրամեքենա «Օպտիմա»	հատ	1	4.7	0.0
3	Լվացքի մեքենա / հին, կոյր/	հատ	1	20.0	0.0
4	Լվացքի մեքենա LG 7 կգ-ոց	հատ	2	320.0	288.0
5	Հնոցի ռնիփերսալ կաթսա	հատ	4	140.0	0.0
6	Խոհանոցի էլ. ջեռոց OK	հատ	1	17,4	0.0
7	Էլ.ջեռոց / դոլիակա/	հատ	1	14,8	0.0
8	Էլ. սալիկներ	հատ	96	149.6	0.0
9	Էլ.տաքացուցիչ «Լյուքսել»	հատ	1	13,5	13.5
10	Էլ. ջեռոց՝ 3 սալիկանոց	հատ	1	15,3	0.0
11	Չրի պոմպ	հատ	3	17.8	0.0
12	Հեռուստացույց «Պանասոնիկ»	հատ	1	174.7	140.0
13	Հեռուստացույց LG /37 սմ/	հատ	1	35.0	28.0
14	Հեռուստացույց LG /54 սմ/	հատ	1	54.0	54.0
15	Տնային կինոթատրոն LG	հատ	1	82.0	65.6
16	Մառցախցիկ «Մինսկ-17»	հատ	1	64.0	0.0
17	Սառնարան -պահարան	հատ	1	14.9	0.0
18	Սառնարան «Չինար»	հատ	1	13.5	0.0
19	Սառնարան LG երկդռնանի	հատ	1	230.0	207.0

20	Համակարգիչ «Սելեոն-400»	հատ	3	275.0	0.0
21	Էլ. բաշխիչ կենտրոն	հատ	2	64.9	0.0
22	Էլ. շիբ' եռափազ	հատ	1	13.8	0.0
23	Եռափազի էլ. անջատիչ	հատ	3	16.5	0.0
24	Էլ. մատղաց	հատ	1	0.3	0.0
25	DVD «Թռչիբա»	հատ	1	22.0	22.0
26	DVD <ELIT> K 308	հատ	1	18.5	18.5
27	Էլ. տարացուցիչ /Գեյզեր/ հԹ 2010	հատ	3	37.5	37.5
28	Էլ. տարացուցիչ	հատ	2	36.0	0.0
29	կրակմարիչ	հատ	2	34.0	34.0
30	կարի մեքենա PMZ	հատ	4	16.0	0.0
31	կարի մեքենա 2M22-1	հատ	10	50.0	0.0
32	կարի մեքենա « Չայկա»	հատ	1	12.5	0.0
33	Չեռքի կարի մեքենա	հատ	1	12.5	0.0
34	Չեռքի կարի մեքենա	հատ	1	7.6	0.0
35	Կարի մեքենա կոշիկի PMZ	հատ	1	40.8	0.0
36	Կարի մեքենա կոշիկի	հատ	1	12.9	0.0
37	Կարտոֆիլ մաքրող մեքենա	հատ	1	7.0	0.0
38	ֆուգանող սղոց	հատ	2	11.8	0.0
39	հաստոց խառատի	հատ	2	22.3	0.0
40	փայտամշակման հաստոց	հատ	1	6.7	0.0
41	գայլիկոնային հաստոց	հատ	2	66.6	0.0
	<b>Ընդամենը</b>	հատ	<b>166</b>	<b>2114.9</b>	<b>908.1</b>
V	<b>Կենցաղային գույք</b>				
1	Դաշնամուր «Կոմիտաս»	հատ	2	53.9	0.0
2	Ջրի բաք 5 տոննանոց	հատ	2	10.9	0.0
3	Պատռահանի երկաթյա փանդակներ	հատ	70	5.4	0.0
4	Երկաթյա պահարան /սեյֆ/	հատ	10	14.9	14.9
5	Սեղան երկար	հատ	1	5.0	0.0
6	Սեղան ձևարարի	հատ	1	2.5	0.0
7	Սեղան արտադրական	հատ	5	5.0	0.0
8	Սեղան նիստերի	հատ	4	45.7	45.7
9	Սեղան տնօրենի	հատ	3	19.0	0.0
10	Գրասեղան լաբորատոր	հատ	17	1.3	0.0
11	Գրասեղան 1 տումբանի	հատ	23	1.8	0.0
12	ճաշարանի սեղան	հատ	27	2.1	0.0
13	Սեղան՝ ամսագրերի	հատ	2	0.2	0.0
14	Սեղան աշակերտական /կարկասե/	հատ	65	10.3	0.0
15	Սեղան ճաշարանի	հատ	5	5.0	0.0
16	Գրասեղան ուսուցչական	հատ	8	5.8	0.0
17	համակարգչի սեղան 130x65x75	հատ	1	55.5	55.5
18	Կահույքի հավաքածու «ժարբերդ»	հավաքածու	2	46.8	0.0
19	Կահույքի հավաքածու «Մոնեկա»	հավաքածու	3	57.7	0.0
20	Բազմոց	հատ	3	14.4	0.0
21	Բազմոց սպասողական	հատ	1	6.9	0.0
22	Զգեստապահարան	հատ	7	15.9	0.0
23	Զգեստապահարան 2 դռնանի 180x60x50	հատ	19	1097.3	1097.3
24	Կողապահարան	հատ	25	25.0	25.0
25	Պահարանիկ	հատ	15	15.0	15.0
26	Բազմոց 3 տեղանի	հատ	2	180.0	180.0
27	Մանկական անկյուն	հավաքածու	2	25.9	0.0
28	Դպրոցական անկյուն	հավաքածու	6	87.2	0.0
29	Գրասպահարան	հատ	22	32.4	0.0

30	Աթոռ՝ փայտյա, կիսափափուկ, ձևավոր քիլոնակով	հատ	27	324.0	324.0
31	Բազկաթոռ տնօրենի	հատ	1	34.8	0.0
32	Բազկաթոռ փայտյա	հատ	8	0.6	0.0
33	Դահլիճի թատերական աթոռ	հատ	30	46.2	0.0
34	Կաշվե բազկաթոռ	հատ	5	7.7	7.7
35	Աթոռ փափուկ	հատ	27	77.0	2.1
36	Աթոռ կիսափափուկ	հատ	20	77.0	1.5
37	Աթոռ / երկաթյա ոտքով/	հատ	13	6.5	6.5
38	Աթոռ ծալովի	հատ	119	119.0	119.0
39	Մանկական աթոռ պլաստմասե քիլոնակով.	հատ	20	10.0	10.0
40	Գրասպահարան 180x80x45	հատ	5	348.8	348.8
41	Աթոռ ճաշարանի	հատ	93	77.0	7.2
42	Աթոռ աշակերտական՝ երկաթյա հենքով	հատ	65	159.0	10.3
43	Աշակերտական նստարան՝ հեմաթոթով	հատ	20	20.0	20.0
	<b>Ընդամենը</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>3156.4</b>	<b>2290.5</b>
<b>VI</b>	<b>Անկողնայի գույք</b>				
1	Մահճակալ փայտյա	հատ	49	3.8	0.0
2	Մահճակալ փայտյա	հատ	13	45.5	41.0
3	Մահճակալ երկաթյա	հատ	40	2.5	0.0
4	ներքնակ	հատ	16	103.4	0.0
5	ներքնակ	հատ	82	774.7	465.0
6	վերնակ	հատ	82	671.6	403.0
7	վերնակ / պահեստ/	հատ	20	163.8	163.8
8	բարձ	հատ	82	62.2	62.2
	<b>Ընդամենը</b>		<b>302</b>	<b>1827.5</b>	<b>1135.0</b>
<b>VII</b>	<b>Այլ հիմնական միջոցներ</b>				
10	Աարհեստական խալի / 4 հատը 300x400, իսկ 1- հատը՝ 200x400 չափսերի/	հատ	5	57.7	0.0
11	տղեգորգ՝ 1մ ըայնքով	գծմ	179	82.6	0.0
12	գորգ մեկ հատը 200x300, 2հատը՝ 150x200	հատ	3	28.2	0.0
13	Հատակի փաղաս	քառ մ	36	46.2	46.2
14	Գեղարվեստական նկար	հատ	2	118.5	107.0
15	Գեղարվեստական նկար	հատ	5	159.3	147.0
16	Գեղարվեստական նկար	հատ	7	127.6	115.6
	<b>Ընդամենը</b>		<b>1729</b>	<b>620.1</b>	<b>415.8</b>
<b>VIII</b>	<b>Գրքեր</b>				
1	Գեղարվեստական գրքեր	հատ	3243	266.4	0.0
2	Քաղաքական, կոմունիստական, գաղա- փարախոսական, գրականություն	հատ	432	15.4	0.0
3	Զարտեգներ	հատ	14	7.0	7.0
	<b>Ընդամենը</b>		<b>x</b>	<b>288.8</b>	<b>29.7</b>
	<b>Ամբողջը</b>		<b>x</b>	<b>39677.6</b>	<b>27420.0</b>

Հավելված 3

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարի 2007 թվականի սեպտեմբերի  
25-ի N125 Ա/11 հրամանի

ԿԱԶՄ

«Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն»  
ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով հանձնվող գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը մնացորդային՝ հաժվեկշռային արժեքով (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
I	Անկողնային պարագաներ				
1	աղիալ բրդյա	հատ	72	0.0	0.0
2	աղիալ կիսաբրդյա	հատ	58	0.0	0.0
3	աղիալ բրդյա / պահեստ/	հատ	43	8925.6	383.8
4	ներքնակի երես	հատ	82	650.0	53.3
5	սավան	հատ	97	1505.2	146.0
6	սավան	հատ	40	1500.0	60.0
7	վերնասավան	հատ	30	500.0	15.0
8	վերնասավան	հատ	40	2000.0	80.0
9	բարձի երես	հատ	141	384.4	54.2
10	բարձի երես	հատ	59	450.8	26.6
11	բարձի երես	հատ	40	850.0	34.0
12	բարձի երես	հատ	30	200.0	6.0
13	երեսսրբիչ	հատ	34	329.4	11.2
14	երեսսրբիչ	հատ	86	400.0	34.4
15	երեսսրբիչ /պահեստում/	հատ	18	400.0	7.2
16	թեյի սրբիչ / պահեստում/	հատ	10	300.0	3.0
17	բաղնիքի ցամբոց	հատ	10	1500.0	15.0
18	մանկական սպիտակեղենի հավաքածու/ սավան ,վերնասավան /	հավաքածու	1	800.0	0.8
19	անկողնային սպիտակեղեն / սավան, վերնասավան ,բարձի երես/	հավաքածու	10	3000.0	30.0
20	մանկական ծածկոց	հատ	7	700.0	4.9
21	վարագույր	հատ	143	384.6	55.0
	<b>Ընդամենը</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>1020.4</b>
II	Հագուստեղեն				
1	մանկական զգեստ տարբեր չափերի	հատ	82	315	25.8
2	մանկական զգեստ տարբեր չափերի	հատ	2	800	1.6
3	խայաթ՝ խոհանոցի աշխատողների	հատ	6	1500	9.0
4	խայաթ	հատ	1	1500	1.5
5	շալվար մանկական	հատ	7	494.6	3.5
6	մանկական հագուստ տարբեր / պահեստ/	հատ	30	400	12.0
7	մանկական ձեռքի փոքր սրբիչներ	հատ	25	100	2.5
8	մանկական բամբակե տակաշոր	հատ	10	200	2.0
9	ջեմպր	հատ	3	395	1.2
10	կանացի կիսաշրջագգեստ	հատ	15	953.9	14.3
11	մանկական սարորտային շալվար	հատ	3	385	1.2
12	մանկական մայկա՝ կիսաթև	հատ	50	300	15.0
13	մանկական մայկա՝ կիսաթև	հատ	63	500	31.5
14	մանկական անթև մայկա	հատ	21	250	5.3
15	կարճ տաբատ	հատ	56	500	28.0
16	Մանկական տարբեր հագուստ	արկղ	5	2000	10.0
17	գուլպա	գուլգ	43	150	6.5

	Ընդամենը		x	x	170.7
III	Սպորտային գույք և հանդերձանք				
1	մարմնամարզական ձի	հատ	1	9.0	0.0
2	մարմնամարզական գերան	հատ	1	4.2	0.0
3	թենիսի սեղան	հատ	1	6.0	0.0
4	մարմնամարզական այծիկ	հատ	1	1.0	1.0
5	մազլցման պարան	հատ	1	36.0	36.0
6	Մարմնամարզական մատ	հատ	4	140.0	84.0
7	մարմնամարզական մատ	հատ	11	26.0	0.0
8	մարմնամարզական պատ/ 2 կտորից/	հատ	2	10.3	0.0
9	շվեդական պատ / 2 կտորից/	հատ	1	10.0	10.0
10	Ձի փայտյա մանկական	հատ	6	200	1.2
11	Բազմետոն	հավաքածու	4	1000	4.0
12	Ցատկապարան	հատ	5	150	0.8
13	Սկավառակ	հատ	2	100	0.2
14	Թրենինգային կոն	հատ	10	50	0.5
15	մարմնամարզական այծիկ	հատ	2	77	0.2
16	թռիչքի ձող	հատ	1	154	0.2
17	տրինաժոր	հատ	1	231	0.2
18	ցանց՝ վոլեյբոլի	հատ	1	77	0.1
19	ցանց վոլեյբոլի /պահեստ/	հատ	1	100	0.1
20	ցանց՝ բասկետբոլի	հատ	1	77	0.1
21	վարկյանաչափ	հատ	1	154	0.2
22	վարկյանաչափ /պահեստ/	հատ	1	700	0.7
23	խաղալիք նռնակ	հատ	1	77	0.1
24	գնդակ՝ վոլեյբոլի	հատ	2	77	0.2
25	մեծ և փոքր խաղալիք գնդակներ	հատ	14	100	1.4
26	գնդակ՝ բասկետբոլի	հատ	6	500	3.0
27	Ուժաչափ	հատ	1	6000	6.0
28	շախմատ	հատ	1	500	0.5
29	շախմատ /պահեստ/	հատ	2	6000	12.0
	Ընդամենը		x	x	162.4
IV	Խոհանոցային պարագաներ				
1	ափսե ճաշի	հատ	12	1017.8	12.2
2	ափսե ճաշի	հատ	87	300	26.1
3	ափսե ճաշի պլաստմասե	հատ	17	100	1.7
4	ափսե՝ աղանդերային ( գալուսկի)	հատ	15	77	1.2
5	ափսե՝ աղանդերային ( գալուսկի)	հատ	183	200	36.6
6	պատառաքաղ	հատ	23	225	5.2
7	պատառաքաղ	հատ	124	50	6.2
8	Ալյումինե պատառաքաղներ	հատ	318	77	24.5
9	ճաշի գդալ	հատ	6	77	0.5
10	ճաշի գդալ	հատ	103	150	15.5
11	թեյի գդալ	հատ	93	43.9	4.1
12	շերեփ	հատ	3	77	0.2
13	հացի ափսե	հատ	35	33	1.2
14	դանակ	հատ	33	97.3	3.2
15	մսի արքան /շիպցի/	հատ	2	77	0.2
16	պղինձ՝ ալյումինե	հատ	8	77	0.6
17	պղինձ՝ էմալե	հատ	6	77	0.5
18	թաս՝ պլաստմասե	հատ	4	77	0.3
19	թաս պլաստմասե	հատ	11	250	2.8
20	տագիկ՝ էմալե	հատ	1	77	0.1
21	տագիկ՝ ալյումինե	հատ	1	77	0.1
22	ժառովնի (տապակա)	հատ	3	77	0.2
23	հացի տախտակ	հատ	1	77	0.1
24	հացի տախտակ	հատ	2	1350	2.7

25	բացիչ	հատ	9	77	0.7
26	աղաման	հատ	126	77	9.7
27	կրեմհարիչ	հատ	2	77	0.2
28	այլաստմասե մեծ բաժակ՝ կովշ	հատ	1	77	0.1
29	այլաստմասե մեծ բաժակ՝ կովշ	հատ	2	270	0.5
30	պղինձ՝ այլումինե / թեյի- 20 լիտրանոց/	հատ	1	77	0.1
31	քամիչ	հատ	2	77	0.2
32	քամիչ	հատ	5	140	0.7
33	դույլ՝ այլումինե	հատ	6	77	0.5
34	դույլ՝ էմալե	հատ	1	77	0.1
35	դույլ՝ էմալե	հատ	1	4900	4.9
36	դույլ՝ կապրոնե	հատ	2	800	1.6
37	խոհանոցի փայտյա թի	հատ	12	77	0.9
38	Սկուտեղ	հատ	28	77	2.2
39	թեյի բաժակ՝ հախչապակյա՝ նոնակով	հատ	79	163.6	12.9
40	այլաստմասե բռնակով գավ /պահեստ/	հատ	100	2220.5	222.1
41	Հացի դանակ	հատ	3	100	0.3
42	Բաժակ	հատ	2	77	0.2
43	Սփռոց	հատ	2	77	0.2
44	Գլխարկ՝ գլխաշոր	հատ	4	77	0.3
45	Մսադաց	հատ	1	77	0.1
46	Վագ՝ այլաստմասե	հատ	2	77	0.2
47	Ճաշի սեղան	հատ	4	77	0.3
48	խոհանոցի հավաքածու	հավաքածու	1	77	0.1
49	խոհանոցի չափիչ կովշ	հատ	2	77	0.2
50	Կշեռք պահեստի և ճաշարանի	հատ	4	1231	4.9
	<b>Ընդամենը</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>409.5</b>
<b>V</b>	<b>Գրենական պիտույքներ</b>				
1	Պարոցական հավաքածու / 5 տոպրականի/	արկղ	1	1500	1.5
2	Պարոցական հավաքածու / 6 տոպրականի/	արկղ	2	1800	3.6
3	Վրձին	հատ	1	134	0.1
4	Տետր / 12 թերթանի/	հատ	50	30	1.5
5	Թղթալանակ զծագրության համար	հատ	38	118.4	4.5
6	Գիրք՝ ամբարային	հատ	7	400	2.8
7	Նոթատետր	հատ	6	600	3.6
8	Տուշ	հատ	53	55.5	2.9
9	Քանոն	հատ	38	24.5	0.9
10	Քանոն՝ եռանկյունի	հատ	8	75	0.6
11	Ամրակ	տուփ	2	100	0.2
12	Շտամպի բարձիկ	հատ	1	1000	1.0
13	Ստեպլերի կարիչ	հատ	5	50	0.3
14	Գրատախտակ	հատ	20	77	1.5
	<b>Ընդամենը</b>		<b>x</b>	<b>x</b>	<b>25.1</b>
<b>VI</b>	<b>Այլ արագամաշ առարկաներ</b>				
1	Կշեռք բժշկական	հատ	1	0.1	0.0
2	հեռախոսի ապարատ «Պանատոնիկ»	հատ	1	24.0	24.0
3	Ճնշման ապարատ(Տոնոմետր)	հատ	1	22.0	11.0
4	Առաջին օգնության արկղ	հատ	1	9.4	9.4
5	Ծաղկի վագ՝ ապակյա	հատ	2	77	0.2
6	Հայի	հատ	3	77	0.2
7	քիվ	հատ	96	77	7.4
8	այգու նստարան՝ փայտյա	հատ	11	77	0.8
9	պատի ժամացույց	հատ	4	77	0.3
10	կահույքե կախիչ	հատ	1	1000	1.0
11	արդուկ	հատ	3	12000	36.0
12	արդուկ	հատ	2	5500	11.0

13	արդուկ	հատ	1	6500	6.5
14	վաննա լվացքի	հատ	2	231	0.5
15	ստեյաժ՝ երկաթյա	հատ	51	71	3.6
16	Այլումինե լվացարան	հատ	2	77	0.2
17	հեռախոսի ապարատ	հատ	2	7500	15.0
18	Ծաղկի վազ՝ կերամիկական	հատ	6	77	0.5
19	Ցայտադրվող /շենքի բակում/	հատ	2	77	0.2
20	կաղապար՝ կոշիկի	հատ	1	1540	1.5
21	մուրճ	հատ	1	154	0.2
22	մուրճ	հատ	5	77	0.4
23	բիզ	հատ	3	77	0.2
24	կոշկակարի դանակ	հատ	1	77	0.1
25	փայտամշակման դազգահ	հատ	8	77	0.6
26	զոզնոց՝ աշխատանքային	հատ	13	77	1.0
27	զոզնոց /պահեստ/	հատ	14	384.7	5.4
28	նրբատոց (լոբզիկ)	հատ	3	77	0.2
29	կոշկակարի դանակ՝ ռեզակ	հատ	2	77	0.2
30	ստամեսկա	հատ	1	77	0.1
31	սոլոց՝ ձեռքի	հատ	8	300	2.4
32	սոլոց՝ ձեռքի /պահեստ/	հատ	1	2700	2.7
33	գայլիկոն՝ ձեռքի	հատ	4	250	1.0
34	դուր	հատ	14	100	1.4
35	խարտոց	հատ	2	500	1.0
36	ռանդա /փոքր/	հատ	6	250	1.5
37	ռանդա սովորական	հատ	11	400	4.4
38	փորիչ	հատ	3	300	0.9
39	աքցան	հատ	2	100	0.2
40	մամիչ	հատ	1	500	0.5
41	Այգու հավաքածու /պահեստ/	հատ	1	77	0.1
42	Յնցուղ	հատ	1	77	0.1
43	Փոցիս	հատ	6	77	0.5
44	Բահ	հատ	3	77	0.2
45	Քերիչ	հատ	1	77	0.1
46	Մայա	հատ	1	231	0.2
47	Հակահրդեհային ատրճանակ	հատ	5	406.4	2.0
48	Արդուկի տակդիր	հատ	3	77	0.2
49	Հեռախոսի տակդիր՝ պատի	հատ	2	500	1.0
50	Սեղանի խոզանակ	հատ	11	56	0.6
51	Ղռան պետլի	հատ	20	38.5	0.8
52	Ջրաման /գրաֆին/	հատ	4	77	0.3
53	Պլոմբ	հատ	3	77	0.2
54	Կախովի փական	հատ	2	1000	2.0
55	Ջուզարանի կափարիչ	հատ	1	300	0.3
56	Քար մսի վերամշակման	հատ	2	1000	2.0
57	Կոշիկի շնուրոք	հատ	153	10	1.5
58	Կոշիկի տակդիր	հատ	5	500	2.5
59	Խամուտ /մուֆտ/	հատ	5	100	0.5
60	Մատնոց	հատ	161	10	1.6
61	Էլեկտրական դրոսել	հատ	2	50	0.1
62	Մմետաղյա անկյուն	գույգ	32	300	9.6
63	էլ. լամպ	հատ	13	110	1.4
64	էլ. խրոց	հատ	2	175	0.4
65	էլ. անջատիչ	հատ	4	346.3	1.4
66	էլ. պատրոն	հատ	4	150	0.6
67	ցերեկային լամպ երկար	հատ	7	450	3.2
68	ցերեկային լամպ կարճ	հատ	5	400	2.0
69	ցերեկային լամպ երկար	հատ	7	450	3.2
70	տնտեսական ավել	հատ	2	800	1.6
71	Լոբզիկի սոլոց	հատ	6	50	0.3

72	Սիֆոն	հատ	3	500	1.5
73	Մանկական հավաքածու / տարբեր խաղալիքների/	արկղ	1	2000	2.0
74	Փափուկ խաղալիք	հատ	2	77	0.2
75	Ստարտյոռ	հատ	2	195.5	0.4
76	Ստարտյոռ	հատ	20	50	1.0
77	Մանկական բահ	հատ	5	77	0.4
78	Նկարներ հնամաշ	հատ	6	77	0.5
79	Բանվորական խալաթ	հատ	16	1500	24.0
80	աստիճան հակահրդեհային երկաթյա	հատ	1	1000	1.0
81	աստիճան փայտյա	հատ	1	1000	1.0
82	էլեկտրական ջահ	հատ	4	3000	12.0
83	էլեկտրական ջահ	հատ	8	3000	24.0
84	Մկրատ	հատ	3	77	0.2
85	Մկրատ	հատ	15	77	1.2
86	էլեկրական սրաքար /տաչիլո/	հատ	1	308	0.3
87	էլեկտրական շարժիչ /մոտոր/	հատ	1	231	0.2
88	սրաքար/տաչիլո/	հատ	1	77	0.1
89	պահարան դեղորայքի	հատ	2	77	0.2
90	թախտ բժշկական	հատ	1	77	0.1
91	պատզարակ	հատ	1	77	0.1
92	գազօջախ՝ բալոն 5 կգ-ոց	հատ	1	8500	8.5
93	վանտուզ	հատ	3	134.7	0.4
94	վանտուզ	հատ	4	77	0.3
95	Ծառերի սրկման սարք	հատ	1	595	0.6
	<b>Ընդամենը</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>x</b>	<b>274.0</b>
VII	<b>Գրքեր</b>				
1.	Գրքույկներ, ուղեցույցներ	հատ	45	22.7	22.7
2.	Ղասազրքեր-ընդամենը	հատ	3125	0.0	0.0
	<b>Ընդամենը</b>		<b>449.7</b>	<b>x</b>	<b>22.7</b>
	<b>Ամբողջը</b>		<b>x</b>	<b>x</b>	<b>2084.8</b>